

# ՍԱՂՄՈՍ 42

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Ներդրության և գերության մեջ Աստծուն ծարավ	Մտահոգության մեջ Աստծուն փափագելը	Ուխտագնացության համար պատրաստության մեջ բժշկության աղոթք	Գերության մեջ գտնվողի աղոթք	Գերության մեջ գտնվող Ղևտացու աղոթք
<u>MT ներածություն</u> «Կորիսի որդիների երգը: Մասչի»				
42:1-4	42:1-3	42:1-3	42:1-3	42:1 42:2 42:3
	42:4	42:4-5բ	42:4-5	42:4
42:5-8	42:5	42:5գ-6ա		42:5-6ա
	42:6-8	42:6բ-8	42:6-8	42:6բ-դ 42:7 42:8
42:9-11	42:9-10	42:9-10	42:9-10	42:9 42:10
	42:11	42:11	42:11	42:11

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

## ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Առաջին համարը մշտ խորապես ազդել է ինձ: Մա հենց այն է, ինչ պետք է լինի անձնական փոխհարաբերության բուն էությունը: Սակայն անգամ այս խորը մտերմությունը չի նշանակում, որ խնդիրներ, հիվանդություն, թշնամու հարձակումներ տեղի չեն ունենա: Մեծագույն խոստումը խնդիրների բացակայությունը չէ, այլ Նրա ներկայությունը (տես՝ Սաղմ. 23:4, 16:8):

Բ. Կարծում եմ սաղմոսերգուն գերության մեջ է:

1. Նա չի կարողանում գնալ տաճար, Սաղմ. 42:4
2. Նա փափագում է Քանանը, Սաղմ. 42:6
3. Նրան ծաղրում են իրեն գերեվարողները, Սաղմ. 42:3, 10 (տես՝ Սաղմոս 137, որը նույնպես գերության սաղմոս է)

NASB Մերտողության Աստվածաշունչը (էջ՝ 781) ունի մի հետաքրքիր առաջարկ, որ սաղմոսերգուն Կորիսի սերնդի Ղևտացի էր, որը գերեվարվել էր Սիրիա: Այն ներկայացնում է Սիրիական արշավի մի օրինակ (օրինակ՝ 4 Թագ. 12:17-18): Կորիսի որդիներն ապրում էին Իսրայելի հյուսիսային տարածքում: Մա կարող է բացատրել՝

1. գերության տեսությունը
2. Սաղմ. 42:6-ում հյուսիսային աշխարհագրական տեսարանները

Գ. Պարբերաբար կրկնվող արտահայտությունը «վիատված» է (բառացի՝ «հուսահատված», BDB 1005, KB 1458, *Hithpoel* (ԱՆԿԱՏԱՐ) այս փոքրիկ պոեմում երեք անգամ հայտնվում է՝ Սաղմ. 42:5,6 և 11-ում: Սաղմոսերգուն ներքուստ (Սաղմ. 42:5) և արտաքուստ (Սաղմ. 42:10) վիրավորված է:

Նաև նկատեք, որ Սաղմ. 42:5 և 11-ի կրկնությունը միայն չնչին փոփոխություններով: Այս նույն համարը դարձյալ հայտնվում է Սաղմ. 43:5-ում, որից կարելի է հասկանալ, որ այս երկու Սաղմոսները սերտ կապված են, հավանաբար որպես մեկ Սաղմոս (UBS *Ձեռնարկը*, էջ՝ 398):

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 42:1-4

<sup>1</sup>Ինչպես եղջերուն է ջրի վտակներ փափագում,  
Այնպես էլ իմ անձը Քեզ է փափագում, ո՛վ Աստված:

<sup>2</sup>Հոգիս ծարավ է Աստծուն՝ կենդանի Աստծուն .

Ե՛րբ եմ գալու ու երևալու Աստծո առջև:

<sup>3</sup>Ցերեկ ու գիշեր արցունքներս ինձ հաց եղան,  
Մինչ շարունակ ինձ ասում են . «Ո՛ր է քո Աստվածը»:

<sup>4</sup>Երբ մտաբերում եմ այս բաները, հոգիս թափվում է իմ մեջ .

Քանի որ բազմության հետ էի գնում, նրանց հետ Աստծո տունն էի մտնում՝  
Ուրախության ու օրհնության ձայնով տոնախմբող բազմության հետ:

**42:1-4** Այս պարբերության մեջ հնարավոր է հարցնել, թե որն է խնդիրը՝

1. սաղմոսերգուն զգում է կարծես թե կտրված է ՅԱՀՎԵԻՑ
2. սաղմոսերգուն չի կարողանում երկրպագել տաճարում (տես՝ Սաղմ. 42:4բ,գ)
3. սաղմոսերգուի հավատքը ստուգվում է իր ներկայիս իրավիճակներով (այսինքն՝ գերությունը) և իր հակառակորդների ծաղրուծանակով (Սաղմ. 42:3, 10, 79:10, 115:2)

Տես Համատեքստային Հասկացություններ, Բ:

**42:1**

NASB, NKJV

«ծարավում է»

NRSV, TEV,  
LXX, REB  
NJB  
JPSOA

«փափագում է»  
«ցանկանում է»  
«կանչում է»

Այս ԲԱՅԸ (BDB 788, KB 881, *Qal ԱՆԿԱՏԱՐ*) գտնվում է ՀԿ-ում միայն երեք տեղ: որից երկուսը այստեղ, իսկ մյուսը՝ Հովել 1:20-ում, որտեղ այն կիրառվում է դաշտի զագանների համար:

Պետք է արդյո՞ք մեկնաբանը շեշտադրի սաղմոսերգուի Աստծո համար խորը ցանկությունը (տես՝ Սաղմ. 63:1), թե տոնական օրը տանարում գտնվելու իր ցանկությունը (Սաղմ. 42:4): Կարծում եմ երկրորդ տարբերակը ավելի համապատասխան է համատեքստին:

❖ «անձր» Սա երբայերեն *nephesh* (BDB 659, տես՝ Սաղմ. 42:2,4,5,6,11) տերմինն է: Տե՛ս Սաղմոս 3:2 և Ծննդ. 35:18-ի առցանց գրառումները: Սա ինքն իրեն դիմելու դարձվածք է:

❖ «կենդանի Աստծուն» Սա բառախաղ է՝

1. ապրել (ԲԱՅ, ԴԴ BDB 310)
2. կենդանի (ԴԴ, ԱԾԱԿԱՆ, BDB 311 I)
3. ՅԱՀՎԵ (ԴԴԴ, BDB 217, Աստծո ուխտի անունը, տես՝ Ծննդ. 2:4, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ):

ՅԱՀՎԵՆ միակ և մշտապես կենդանի Աստվածն է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ): Մնացած ամեն ինչը ապրում է Նրա շնորհիվ, և Նրա համար (տես՝ Սաղմ. 18:46): Իսրայելի Աստծո այս առանձնահատկությունը որպես «կենդանի» հակադրվում է հեթանոս կուռքերի հետ, որոնք կույր են, խուլ ու համր, և գոյություն չունեն (տես՝ Ես. 44:9-20, Ամբ. 2:18-19):

**42:2 «երևալու Աստծո առջև»** Սա տոնական օրը տանարում գտնվելու համար կիրառվող դարձվածք է: Սաղմոսերգուին խանգարող բան կար տոնական օրերին Երուսաղեմում գտնվելու համար:

Հարց է առաջանում, թե ինչպես կարող ենք հասկանալ այս բաղաձայները:

1. NASB հետևում է MT «երևալ առջև» խոսքը
2. RSV տարբերակը ձայնավորները փոխելով ներկայացնում է «և տեսնել Աստծո երեսը»:

UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 232) տալիս է տարբերակ #2 “C” գնահատական (այսինքն՝ բավականին կասկածելի):

**42:3 «նրանք»** Տեքստը չի հիմնավորում, թե ում մասին է խոսքը:

1. նրան գերվարդների
2. թշնամիների
3. հեթանոսների

Ես կարծում եմ տարբերակ առաջինն է համապատասխանում Սաղմոսի հետ: NJB տարբերակն այս Սաղմոսը վերնագրել է «Գերության մեջ գտվող Ղևտացու ողբը»:

Ուշադրություն դարձրե՞ք, որ սաղմոսերգուն զգում է, որ այս մարդիկ ծաղրում են իրեն ամբողջ օրը (Սաղմ. 42:3բ, 79:10, 115:2):

**42:4** Երկրպագությունը պետք է լինի ուրախ, սպասված փորձառություն: Հուսով եմ, որ երկրպագության ձեր փորձառությունն այսպես է բնութագրվում:

Սաղմոսերգուն հիշում է իր անցյալի երկրպագության ժամանակները:

1. հիշում եմ – BDB 269, KB 269, *Qal* ԸՂԶԱԿԱՆ
2. հոգիս թափվում է իմ մեջս – BDB 1049, KB 1629, *Qal* ԸՂԶԱԿԱՆ

NASB, NRSV  
NKJV  
TEV, JPSOA

«ամբոխ»  
«բազմություն»  
«ամբոխներ»

Այս բառը (BDB 697) «ամբոխ» թարգմանված, ՀԿ-ում միայն այստեղ կարելի է հանդիպել, սակայն այդ նույն բաղաձայնները կարող են նշանակել «թավուտ», «ծածկ», «վրան», «տաղավար»: LXX թարգմանությունը երկրորդ տարբերակն է որպես լավագույն զուգահեռ տեսել այս բառը թարգմանելիս (նաև, UBS Տեքստային Նախագիծն է նշում, էջ՝ 233): Համառոտ լավ քննարկման համար տես՝ NIDOTTE, հատոր 3, էջ՝ 247:

❖ «առաջնորդեմ նրանց տոնախմբության մեջ» / հայ.՝ «տոնախմբող բազմության հետ»  
Որոշակի շփոթություն կա այս խոսքի նշանակության հարցում:

1. «դանդաղ քայլել» – BDB 186, KB 214, *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ (սաղմոսերգուն Դևտացի երգիչ Կորիս էր՝ ներգրավված տաճարի ծեսերի, երգերի և պատարագների մեջ, տես՝ 2 Մնաց. 20:19):
2. «վեհափառների» - նկատի ունի պաշտամունքի վրանատեղին (NJB, REB)
3. UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 234) տալիս է “C” գնահատական (քավականին կասկածելի) «նրանց առաջնորդելու» խոսքին:

Բոլոր երեք տարբերակներում միակ տարբերությունը ձայնավորների նշաններն են:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 42:5-8**

**5**Ինչո՞ւ ես վիստված, ա՛նձ իմ, և ինչո՞ւ ես իմ ներսում անհանգիստ:  
**Հուսա՛ Աստծուն, նորից փառաբանելու եմ Նրան՝  
 Քանի որ Իր ներկայության մեջ փրկություն կա:**  
**6**Ո՛վ իմ Աստված, հոգիս ընկճված է իմ ներսում.  
**Դրա համար էլ Քեզ եմ հիշում  
 Հորդանանի երկրից ու Հերմոններից, Միզար բլրից:**  
**7**Խորքը խորքին է կանչում Քո հորձանքների ձայնով.  
**Քո բոլորը ալիքներն ու ալեկոծություններն իմ վրայով անցան:**  
**8**Սակայն ցերեկը ՏԵՐԸ կիրամայի Իր ողորմությանը,  
**Ու գիշերը Իր երգն ինձ հետ կլինի,  
 Իմ աղոթքը՝ իմ կյանքի Աստծուն:**

**42:5-8** Սաղմոսերգուն փորձում է իրեն վերահաստատել: Սա փոխանցվում է երկու հարցերով՝ Սաղմ. 42:5-ում: Նա պատասխանում է հարցերին.

1. «հուսա» («սպասիր», BDB 403, KB 407, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) Աստծուն
2. «նորից փառաբանելու եմ Նրան - (BDB 392, KB 389, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) քանի որ Նրա ներկայության մեջ փրկություն կա»
3. «Քեզ եմ հիշում» (BDB 269, KB 269, *Qal* ԱՆԿԱՏԱՐ)  
 ա. Հորդանանի երկրից  
 բ. Հերմոններից (BDB 356, այս անունը ՀՈԳՆԱԿԻ է ՀԿ-ում միայն այստեղ, հետևաբար «գազաթներից»)  
 գ. Միզար բլրից («փոքրիկ բլուր», BDB 859, LXX) գտնվում է միայն այստեղ ՀԿ-ում: Այն կարող էր վերաբերել՝  
 1) Հերմոնի լեռան մոտ գտնվող փոքր բլրի  
 2) Մորիա լեռանը՝ Երուսաղեմի տաճարի տեղանքը, նկատի ունենալու կերպ

Եբրայական պոեզիան շատ ճկուն է: Այնտեղ տրված նկարագրությունները շատ հաճախ մշուշոտ են (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵԲՐԱՅԱԿԱՆ ՊՈԵԶԻԱ):

**42:7** Նկարագրությունը հզոր է: «Խորքը խորքին է կանչում» արտահայտությունը հետաքրքիր է, սակայն անորոշ: Ի՞նչ ջրվեժների մասին է նա խոսում:

1. սաղմոսերգուի արցունքների, Սաղմ. 42:3

2. Հորդանան Գետի Չորը և սարերում դրա սկզբնաղբյուրը, Սաղմ.42:6

Հաջորդ տողի նշանակությունը հնարավոր է լինեն այն խնդիրները, որոնց բախվել է սաղմոսերգուն (տես՝ Սաղմ. 69:1-2, 88:7): Նկատեք, որ դրանք ՅԱՀՎԵԻ՝

1. ջրվեժներն են
2. ալիքները
3. ալեկոծությունները

որ վրա են հասել սաղմոսերգունին (BDB 716, KB 778, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ): Հավատարիմ հետևորդները ապրում են ընկած՝ մեղավոր աշխարհում, սակայն հավատում, վստահում, որ ՅԱՀՎԵՆ է «իմ կյանքի Աստվածը» (Սաղմ.42:8գ): «Ինչու»-ն անհայտ է, սակայն «Ով»-ը մեր հետ է և դա հայտնի է:

«Ջրի» տեսարանն այս Սաղմոսում բազմատեսակ է՝

1. ջրի վտակներ, Սաղմ. 42:1 (այսինքն՝ երաշտ)
2. արցունքներ, Սաղմ. 42:3 (այսինքն՝ ցավ)
3. գետ (այսինքն՝ Հորդանան)
4. խորք՝ ձոր, Սաղմ. 42:7
  - ա. զգացմունքներ
  - բ. Ծննդոց 1-ում Աստծո կողմից քառսին հաղթելու տեսարանը
5. ջրվեժներ (այսինքն՝ հյուսիսում թաքստոցներ, որոնք հավանաբար ջրվեժի տակ էին)
6. ալիքներ՝ ալեկոծություններ (այսինքն՝ խնդիրների հեղեղներ)

**42:8** Քանի որ սաղմոսերգունի արցունքները գիշեր ու ցերեկ դարձել էին նրա կերակուրը (Սաղմ. 42:3), այժմ ՅԱՀՎԵԻ (նկատեք, որ սա այս Սաղմոսում միակ տեղն է, որ օգտագործվում է ՅԱՀՎԵ անունը: Սաղմոսաց գրքի Երկրորդ Գրքում ավելի շատ գերակշռում է Աստվածության *Էլոհիմ* անունը, ինչպես որ Առաջին Գրքում ՅԱՀՎԵՆ) բարեգթությունը և երգն է նրա ուղեկիցը:

❖ **«Նրա երգը»** Արդյո՞ք սա էր ՅԱՀՎԵԻ բարեգթության արդյունքը (*hesed*, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED)), թե սա դրան համագոր մի բան է: Ո՞րն է ՅԱՀՎԵԻ երգը: Ինչպե՞ս է սաղմոսերգունի երրորդ տողի աղոթքը կապված «այս երգի» հետ: Հավանաբար սա վերաբերում է սաղմոսերգունի կողմից ՅԱՀՎԵԻ ողորմությունն ու հավատարմությունը բովանդակող փառաբանություններին: Այս պոեզիայի մանրամասները անհայտ են: Մենք պետք է թույլ տանք այս պարբերության կշիռն ու զգացմունքները, և տողերի հանգավորումները տանեն մեզ ընդհանուր տպավորության մեջ: Մի՛ հորինեք մանրամասներ: Մի՛ ստեղծեք վարդապետություններ պոեզիայի առանձնակի՝ զատված տողերի վրա:

❖ **«իմ կյանքի Աստվածը»** Հավատարիմ հետևորդները մենակ չեն. նրանց կյանքը նպատակ ունի. ողորմած Աստվածը նրանց հետ է և նրանց համար: Ոչինչ «պատահական չի լինում» հավատարիմ հետևորդներին (տես՝ Սաղմոս 139):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 42:9-11**

<sup>9</sup>Ասելու եմ Աստծու՝ իմ Վեմին. «Ինչո՞ւ ես մոռացել ինձ, Ինչո՞ւ պետք է տրտում շրջեմ՝ թշնամու հալածանքների պատճառով»:

<sup>10</sup>Ինչպես ոսկորներիս մեջ մխրճված սուր, թշնամիներս նախատում են ինձ՝ Ամեն օր ինձ ասելով. «Ո՞ւ է քո Աստվածը»:

<sup>11</sup>Ինչո՞ւ ես վհատված, ո՞վ իմ անձ, Եվ ինչո՞ւ ես իմ ներսում անհանգիստ: Աստծո՞ւն հուսա, քանի որ նորից փառաբանելու եմ Նրան, Նա՛ է իմ երեսի փրկությունն ու իմ Աստվածը:

**42:9-11** Դուք տեսնո՞ւմ եք դիտավորյալ գուգահեռություն Սաղմ. 42:3-ի և 10-ի միջև, Սաղմ. 42:5-ի և 11-ի միջև:

Սա նման է ամրապնդող ամփոփման: Սաղմոսերգուն մենակ է զգում (Սաղմ.42:9ա), հարձակման տակ (Սաղմ. 42:9բ), վհատված (Սաղմ. 42:11ա,բ): Ինչպե՞ս պետք է արձագանքեր:

1. սպասի – նույնը ինչ Սաղմ.42:5-ում
2. փառաբանի– BDB 392, KB 389, *Hiphil* ԸՂՁԱԿԱՆ
3. հիշի Սաղմ.42:8-ի Աստծուն և իր անցյալի երկրպագության ժամանակները Նրա հետ 42:4-ում: Հավատքը առաջ գնալու իրթան է և կառուցվում է անցյալի վստահության գործերի վրա:

**42:9 «իմ Վեմ»** Տես՝ Սաղմոս 18:1-3-ի գրառումը:

**42:10** Իր հակառակորդների խոսքերը այնքան ցավոտ էին, որ սաղմոսերգուն նկարագրում է նրանց որպես «մահ իր ոսկորների մեջ»: Խոսքերն իրո՞ք ցավեցնում են: Դրանք կարող են բնաջնջել: Դրանք հայտնում են սիրտը և մի օր ամեն մարդ հաշիվ է տալու Աստծուն իր խոսքերի համար (տես՝ Սատթ. 12:36-37):

**42:11դ** Այս վերջին ԳՈՅԱԿԱՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ գործում է Սաղմ. 42:8գ-ի ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ պես: Այն Աստծո ներկայության և հոգատարության հաստատում է: Նա մեր հետ է և մեր համար:

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Սաղմոսների Երկրորդ Գրքում (Սաղմոս 42-72) Աստծո համար երկու անուն կա, որ ամենահաճախն է հանդիպում:

ա. *Էլոհիմ*

բ. ՅԱՀՎԵ

Բացատրե՛ք այս անունների նշանակությունը:

2. Ինչպե՞ս է «կենդանի Աստված» խոսքը ՅԱՀՎԵ անվան համար բառախաղ:
3. Արդյո՞ք հեղինակը՝  
ա. ղևտացի է  
բ. գերի է
4. Որտե՞ղ է Միզար բլուրը:
5. Ո՞վ էր ասում. «Ո՞ր է քո Աստվածը»:
6. Ինչո՞ւ են կարծում, որ Սաղմոս 42 և 43 ժամանակին եղել է մեկ սաղմոս: